

ԱՂՕԹՔ ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ

Քու դիմացդ ծունկի եկած, ամբողջ սրտով կ'աղաչենք եւ գթութիւնդ կը հայցենք, բարերար եւ բազումողորմ Աստուած: Ինչպէս քու ծառաներուդ խոստացար՝ ըսելով. «Ինչ որ հաւատքով խնդրէք Հօրմէն՝ Որդիին անունով, պիտի տրուի ձեզի», այս պահուն շնորհէ՛ եւ իրենց բարի կատարումին հասցուր քեզի հաւատացողներուս խընդրանքները, որովհետեւ քեզի՛ ապաւինած ենք: Քու առատ ողորմութեամբդ մխիթարէ՛ մեզ այս կեանքին մէջ, եւ առաջնորդելով՝ երկինքի անպատմելի արքայութեանդ հասցուր, որպէսզի ամենասուրբ Երրորդութիւնդ փառաբանուի եւ պատուրուի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: